Զարուհի Ղազարյան *(Հայաստան), դոցենտ*
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա

DOI: 10.52853/kmi–2021–v.z–03

ԿՈՄԻՏԱՍԻ ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայ երաժշտարվեստի պատմության մեջ Կոմիտասը երևույթ է: Կոմպոզիտոր և ազգագրագետ, խմբավար և գիտնական, երգիչ և մանկավարժ Կոմիտասը հսկայական դեր խաղաց հայ ժողովրդի երաժշտական մշակույթի զարգացման գործում: XX դարասկզբին, երբ հանդես եկավ Կոմիտասը, հայ պրոֆեսիոնալ երաժշտությունը ձևավորման ակտիվ ժամանակաշրջանում էր գտնվում: Անհրաժեշտ էր նոր աստիճանի բարձրացնել ինչպես ժողովրդական, այնպես էլ պրոֆեսիոնալ երաժշտական ստեղծագործության զարգացումը: Կոմիտասն իր ողջ տաղանդն ի նպաստ դրեց այս խնդիրների կենսագործմանը: Նա հայ գեղջուկի ստեղծագործությունը բնորոշեց որպես ազգային մշակույթի ամենատիպիկ և ամենակարևոր մասը և այն կիրառեց որպես իր արվեստի հիմք՝ հոգևոր (եկեղեցական) երաժշտությանը համընթաց:

Քաջատեղյակ լինելով և խորությամբ ուսումնասիրելով հայ ժողովրդական երգերը և պարեղանակները, դրանք դիտարկելով որպես մոնոդիկ երաժշտական նմուշներ՝ Կոմիտասն արձանագրում է, որ դրանք անցնելով դարերի բովով՝ XIX դար են հասել ժանրային և մեղեդային բազմազանությամբ: Նա առաջինն էր, որ հենվելով հայ երաժշտության ուսումնասիրության վրա՝ առաջ քաշեց հայ երաժշտության ինքնուրույնության կարևոր թեզը և կանխորոշեց ազգային պրոֆեսիոնալ երաժշտության զարգացման ուղիները:

Կոմիտասի ստեղծագործական ժառանգության փոքրածավալ, բայց շատ ինքնատիպ մասն են կազմում դաշնամուրի համար գրված

երկերը: Բազմիցս անդրադառնալով դաշնամուրի համար գրված իր պիեսներին՝ կոմպոզիտորը շատ հաճախ դիմել է նույն ստեղծագործությանը և վերամշակել այն: Կոմիտասն առանձնահատուկ վարպետությամբ և իրեն հատուկ ձեռագրով է հնչեցրել դաշնամուրը, ինչն արդարացիորեն նկատել է նաև Ռ. Աթայանը[1]:

Հայ երաժշտության մեջ կարևոր ավանդ են ազգային պարային մեղեդիների հիման վրա ստեղծված դաշնամուրային «Պարեր» շարքը և «Մանկական նվագներ» փոքրիկ պիեսները:

Առաջին անգամ Կոմիտասի «Պարեր»–ը հրատարակվել են 1925 թ. Փարիզում, «Կոմիտաս վարդապետի բարեկամների հանձնախումբ»–ի ջանքերով, հետևյալ խորագրով՝ «Հայ ժողովրդական երաժշտութիւն. Նոր շարք. Տետր Ա. Պարեր. Գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ»:

Ավելի ուշ Կոմիտասի դաշնամուրային ստեղծագործությունները հրատարակվել են Փարիզում (1951 թ.), Մոսկվայում (1989 թ.), ապա նրա երկերի լիակատար ժողովածուի 6–րդ հատորում, Երևանի «Սովետական գրող» հրատարակչությունում, 1982 թ.: Տարիներ անց, Կոմիտասի ծննդյան 135–ամյակի առիթով, «Պարեր»–ն առաջին անգամ առանձին հատորով հրատարակվեցին Հայաստանի երաժշտական ընկերության նախաձեռնությամբ և երաշխավորությամբ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունում, 2004 թ.:

Կոմիտասի «Պարեր»–ի շարքը կատարողից պահանջում է դաշնամուրը յուրատեսակ հնչեցնելու առանձնահատուկ վարպետություն: Առանձին պարեր ոչ միայն վերակենդանացնում են ժողովրդա–պարային տեսարանների բանաստեղծականությունը, այլև ընկալվում են որպես նրբին զգացմունքներ դրսևորող պատումներ: «Պարեր»–ի հիմքում կարծես դրված են ազգային նվագարանների՝ սրինգի, թառի, բլուլի, զուռնայի, դուդուկի, դափի, մեծ թմբուկի կա-

[1] Տես **Կոմիտաս**, *Երկերի ժողովածու*, հատ. 6, Դաշնամուրային ստեղծագործություններ, խմբ.՝ Ռ. Աթայան, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1982, Նախաբան, էջ 8:

տարումներից գրառված եղանակներ: Դրանք հենց այդ նվագարան-ների կամ դրանց տարբեր զուգադրումների ոճով իրագործված պի-եսներ են: Ստորև ներկայացված նոտային օրինակը այդպիսի քաղվածք է «Երանգի» պարից:

Օրինակ 1



Պարերի շարքը բաղկացած է յոթ պիեսից: Դրանց մեջ կան կանացի հեզանազ և տղամարդկանց առնական պարեր:

Կոմպոզիտորը դաշնամուրի համար գրված իր պիեսներով հետևյալ կարևոր նպատակներն է հետապնդել.

- ✓ վերարտադրել հայ ժողովրդական պարերի կերպարային բովանդակությունը,
- ✓ պահպանել պարեղանակների նախաստեղծ յուրահատկու-թյունը:

Կոմիտասը պարզ և անպաճույճ միջոցների օգտագործմամբ հասել է իր նպատակների իրագործմանը, ստեղծել է դաշնամուրային պարեր, որոնք աչքի են ընկնում ոճական անաղարտությամբ, հենքի պարզությամբ և վառ կերպարայնությամբ: Արդյունքում դրանք նոր էջ բացեցին հայ դաշնամուրային արվեստի բնագավառում՝ առաջ քաշելով XX դ. կատարողական արվեստին բնորոշ որոշակի խնդիրներ: Ընդ որում՝ Կոմիտասն ազգային գործիքային երաժշտության յուրահատկությունները վերարտադրեց եվրոպական գործիքի՝ դաշնամուրի միջոցով:

Ինչ է գրում Կոմիտասը պարի մասին. «*Մարդկային կեանքի աչքի զարնող երեւոյթներից մէկն էլ պարն է: Պարն արտայայտում է իւրաքանչյուր մի ազգի բնորոշ գծերը, մանաւանդ, բարքն ու քաղաքակրթութեան աստիճանը* [...] *Պարի ներքին բովանդակութիւնն, անփոփոխ այս երեք տարրը՝ շեշտ, յանգ եւ եղանակ, բոլոր ազգերն էլ ունին, բայց արտայայտութեան աստիճանը կախումն ունի ազգային խառնուածքից եւ քաղաքակրթութիւնից. իսկ այդ երկուսը՝ ժողովրդի ամբողջ ներքին եւ արտաքին վիճակից*»[2]:

«Պարեր»–ում նա ի հայտ է բերել դաշնամուրը յուրահատուկ հնչեցնելու մի առանձնահատուկ վարպետություն, երաժշտական մտածելակերպի ոչ միայն թարմություն, այլև բացառիկ հստակություն՝ միևնույն ժամանակ պահպանելով գեղարվեստական պարզությունը: Այստեղ ժողովրդական մեղեդին վեր է բարձրանում իր ֆոլկլորային նախատիպից մի նոր աստիճանի՝ հարստացված արտահայտչական հետաքրքիր մտահղացումներով:

Ստորև օրինակ բերվող «Շուշիկի» պարից հատվածը այդպիսի մի օրինակ է:

---

[2] **Կոմիտաս Վարդապետ,** Հայ գեղջուկ պարը, *Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ*, աշխատասիրութեամբ Գ. Գասպարեանի եւ Մ. Մուշեղեանի, գիրք Ա, Երեւան, «Սարգիս Խաչենց», 2005, էջ 284–285:

Օրինակ 2



«Մանկական նվագներ» փոքրիկ պիեսները Կոմիտասը գրել է Կոստանդնուպոլսում ապրած տարիներին (1910–1912 թթ.)[3]: Կոմիտասը Կոստանդնուպոլսում երաժշտության տեսություն և դաշնամուրի մասնավոր դասեր էր տալիս: Ահա այս դասերի համար էլ նա ստեղծում է «Մանկական նվագներ»–ը՝ նրանցում ներառելով գեղջկական պարերի և երգերի երաժշտական նյութը:

Ինչպես նշում է Ռ. Աթայանը՝ «*Կոմիտասի դաշնամուրային ստեղծագործությունները նրա երաժշտական ժառանգության համեմատաբար փոքրածավալ, բայց խիստ ինքնատիպ մի բաժինն է: Այդ ինքնատիպությունը դրսևորված է արդեն իսկ նրանով, որ Կոմիտասը դաշնամուրի արտահայտչական հնարավորությունները հիանալի օգտագործել է՝ մասնավորապես ժողովրդա–երաժշտական գաղափարները յուրօրինակ կերպով մարմնավորելու համար*»[4]:

---

[3] **Կոմիտաս**, *Երկերի ժողովածու*, հատ. 6, էջ 129–137:

[4] Նույն տեղում, էջ 8–9:

Հետաքրքրական է այն փաստը, որ գրեթե նույն ժամանակահատվածում ազգությամբ հունգարացի կոմպոզիտոր Բելա Բարտոկը (1881–1945) Կոմիտասի նման նպատակ է հետապնդել իր մանկական դաշնամուրային պիեսներում ներմուծել ազգային և ժանրային տարրեր: Ինչպես Կոմիտասը, այնպես էլ Բ. Բարտոկը նույն մեկնաբանությունն է տալիս իր մանրանվագներին՝ նշելով հետևյալը. «*Թող սովորողները ուսման առաջին տարիներին ունենան դաշնամուրային պիեսներ, որոնցում ժողովրդական անպաճույճ պարզությունը զուգորդված լինի նրանց մեղեդիական և ռիթմական հատկանիշներով*»[5]:

Կարելի է զուգահեռներ անցկացնել ինչպես Կոմիտասի «Մանրանվագներ» և Բարտոկի «Մանուկներին» կոչվող ժողովածուների, այնպես էլ Կոմիտասի «Երեք փոքրիկ պոլիֆոն շարանվագի» և Բարտոկի «Միկրոկոսմոս» տետրերում զետեղված պիեսների միջև:

Կոմիտասը պարզագույն երկձայն կանոնների օգնությամբ փորձել է զարգացնել երեխաների պոլիֆոնիկ ընկալունակությունը: Ի տարբերություն Բ. Բարտոկի գործերի՝ Կոմիտասի մանրանվագները պարզ ու մատչելի ստեղծագործություններն են, երեխայի ընկալմանը հարմար:

Անփոփոխ պահելով ժողովրդական մեղեդիները, դրանք դաշնակելով ինքնատիպ պարզ ոճով՝ Կոմիտասն այդ պիեսներին հաղորդում է այլ բովանդակություն, մինչդեռ դաշնամուրային որոշ ստեղծագործությունների թեմաները հայտնի են նրա՝ ավելի վաղ գրված խմբերգային և մեներգային ստեղծագործություններից:

Կոմիտասի դաշնամուրային մանրանվագներն առանձնահատուկ են նաև նրանով, որ հեղինակն ամրագրում է կատարման կերպարային բնութագրիչները: Իր ցուցումներով հեղինակն օգնում է ինչպես կատարողներին առհասարակ, այնպես էլ մանկավարժներին՝ պարզաբանելով իր մտահղացումը. օրինակ՝ «Քիչ ավելի արագ, հեռ-

---

5 **Й. Уйфалуши,** *Бела Барток*, Будапешт, изд. Корвина, 1971.

վից», «Նույն տեմպով, համարձակ» կամ «Հպարտորեն, ցնծությամբ»: Այդպիսով նա կատարողին հուշում է կատարման տեմպն ու բնույթը:

Գեղջկական երաժշտության վրա հիմնված իր երկերը Կոմիտասը Կոստանդնուպոլսում ցուցադրել է իր կազմակերպած համերգներում՝ նպատակ ունենալով հայեցի պահել քաղաքի երաժշտական կյանքը:

Կոմիտասին շրջապատում էին հայ շնորհաշատ դաշնակահարներ Շուշանիկ Լալուա–Բաբայանը՝ երգչուհի Մարգարիտ Բաբայանի քույրը, ֆրանսիացի երաժշտագետ և գրականության դոկտոր Լուի Լալուայի կինը (Թիֆլիսում, ապա Փարիզում), Խոսրով Փախչանյանը (Վաղարշապատում), Մարսել Շերիճյան–Շարրեյը (Ժնևում), տիկին Մ. Կարա–Մուրզան (Բաքվում), տիկին Արուսյակ Հարենց–Էվրենյանը (Կոստանդնուպոլսում): Այս դաշնակահարների հետ շփումները կոմպոզիտորի համար մեծ դեր խաղացին դաշնամուրին անդրադառնալու առնչությամբ, և հենց նրանք էին կոմիտասյան պիեսների առաջին կատարողներն ու հանրահռչակողները: Ուշագրավ է այն փաստը, որ Փարիզում «Պարեր»–ը կատարեց ֆրանսիացի նշանավոր դաշնակահար և կոմպոզիտոր Լազար Լևինը դեռ մինչև դրանց տպագրությունը:

Երաժշտագետ Ռ. Աթայանի բնորոշմամբ՝ դաշնամուրային մանկական մանրանվագները, որոնք վերնագրվել են որպես «Տասներկու պիես ժողովրդական թեմաներով», կարող են կա՛մ հնչել իբրև մի ամբողջական շարք, կա՛մ կատարվել յուրաքանչյուրն առանձին–առանձին:

Ինչպես վերևում նշվեց՝ Կոմիտասն ավելի վաղ գրված խմբերգերի կամ մեներգերի թեմաներն ու դաշնամուրային մանրանվագների մայր մեղեդիները պահպանում է անփոփոխ:

Կոմիտասի՝ ժողովրդական երգերի վրա հիմնված դաշնամուրային ստեղծագործություններն, անկասկած, ունեն ինչպես գեղարվեստական, այնպես էլ ուսուցողական նպատակ: Այդ իսկ պատճառով Կոմիտասն իր մշակած ժողովրդական երգերը ներդաշնակել է

հնարավորինս պարզ, որպեսզի դրանք հատկապես սկսնակ դաշնակահարների համար մատչելի լինեն: Մյուս կողմից, եթե պիեսներին մոտենանք մեթոդական խնդիրների տեսանկյունից, կատարող–դաշնակահարին առաջարկվում է նաև դաշնամուրային նվագի տեխնիկական միջոցների բազմազանություն, որն իր հերթին սկսնակ դաշնակահարների համար շահեկան է:

Երաժշտական դաստիարակության մասին խոսելիս Կոմիտասը հորդորում է. «*Ուսուցիչ պարոնե՛ր ու քոյրե՛ր, զգուշութեամբ ու երկիւղածութեամբ մօտեցէ՛ք դաստիարակութեան գործին. խիստ փափուկ պաշտօն մըն է ձերը. դաստիարակելու կոչուած եք սերունդ մը որ ապագայ ազգն է. սխալ ուղղութեամբ ազգ մը կը խորտակէք վերջը*»[6]:

Անշուշտ, էական է և այն, որ պիեսներն ունեն տարբեր աստիճանի բարդություն, հետապնդում են տեխնիկական որոշակի խնդիրներ, և այս ամենն առավել բարձրացնում է մանրանվագների գործնական արժեքը: Պիեսներում հեղինակը համակցում է սահուն կանտիլենան ու կտրուկ ստակատոն, հոմոֆոն և պոլիֆոնիկ բազմաձայնության տարրերը, «մանրանախշ» և ակորդային տեխնիկան, օգտագործում է ձեռքերի խաչաձևում և յուրահատուկ պեդալիզացիա:

Կոմիտասի պիեսներն ունեն խիստ արտահայտված ազգային երանգ և իհարկե մեծ գեղարվեստական արժեք: Շատ կարևոր է ոչ միայն դաշնակահար ուսանողների, այլև երաժշտական դպրոցների սկսնակ դաշնակահարների մեջ սերմանել ազգային մտածողությունն ու ճանաչողությունը, քանի որ երաժշտությունը մատաղ սերնդին ներշնչում է գեղեցիկի զգացողություն և ուղղորդում նրա միտքը դեպի հոգևոր արժեքներ: Ուրեմն երաժշտության միջոցով կարելի է դաստիարակել հայրենասիրություն, կամք, կենսասիրություն:

---

6 **Կոմիտաս Վարդապետ,** Պարն ու մանուկը, տես *Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ*, աշխատասիրութեամբ Գ. Գասպարեանի եւ Մ. Մուշեղեանի, գիրք Բ, Երեւան, «Սարգիս Խաչենց–Փրինթինֆո», 2007, էջ 79:

Կոմիտասի ստեղծագործություններն, ունենալով խիստ ազգային մտածողություն, իրենց ուրույն տեղն ունեն համաշխարհային պրոֆեսիոնալ երաժշտության գոհարների շարքում:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը հետևյալ կերպ է բնորոշել Մեծն Կոմիտասին. «*Կոմիտաս Վարդապետ բարենորոգիչ է հայ եկեղեցական և ժողովրդական երաժշտության և գյուտարարը, որուն գործը կարելի է արժևորել միայն Մեսրոպյան չափանիշներով... Ինչպես Սուրբ Մեսրոպ քառսեն դուրս բերավ և բյուրեղեց ձայները հայ բարբառին և իր ազգին ու աշխարհին պարգևեց կոթողը հայերեն լեզվին, այնպես ալ Կոմիտաս Վարդապետ՝ պեղեց, մաքրեց ու լույս աշխարհ բերավ կույս աղբյուրը հայ երգին: ...Հայ ժողովուրդը կոմիտասյան երգին մեջ գտավ, ճանչցավ իր հոգին, իր ոգեկան ինքնությունը: Կոմիտաս Վարդապետ սկիզբ մըն է, որ վախճան չունի: Ան պիտի ապրի հայ ժողովուրդով, հայ ժողովուրդը պիտի ապրի իրմով, ինչպես այսօր, այնպես էլ հավիտյան*»[7]:

Կոմիտաս ազգագրագետ, գիտնական, մանկավարժի մեծագույն ծառայությունը հայ երաժշտության անդաստանում ազգային պոլիֆոնիկ սկզբունքների հիմնավորումն էր: Դա էր պատճառը, որ տաղանդավոր կոմպոզիտորը հայ ժողովրդական երգի ներդաշնակմանը մոտենում էր բացառիկ լրջությամբ և ներդաշնակությամբ: Դրա ապացույցն է Կոմիտասի ստեղծագործական ամբողջ ժառանգությունը:

---

[7] **Կոմիտաս Վարդապետ,** *Մատենագիտական ժողովածու*, ՀՀ Սփյուռքի նախարարություն, Երևան, 2013, էջ 12:

Ամփոփում

Հոդվածում վերլուծվում են Կոմիտասի ստեղծագործական ժառանգության փոքրածավալ, բայց շատ ինքնատիպ մասը կազմող դաշնամուրային երկերը: Անդրադարձ է կատարվում Կոմիտասի «Պարեր»–ին, որը մանկավարժին և կատարողին ուղղորդում է գործիքը յուրահատուկ հնչեցնելու առանձնահատկություններին: Զուգահեռներ են անցկացվում Կոմիտասի և հունգարացի կոմպոզիտոր Բելա Բարտոկի դաշնամուրային պիեսների միջև՝ Կոմիտասի «Երեք փոքրիկ պոլիֆոն շարանվագի» և Բ. Բարտոկի «Միկրոկոսմոս» տետրի պիեսների օրինակով: Գնահատական է տրվում Կոմիտասի դաշնամուրային պիեսներին՝ շեշտադրելով դրանց խիստ արտահայտված ազգային հենքը և գեղարվեստական արժեքը:

Կոմիտասի դաշնամուրային ստեղծագործությունները, ունենալով ուսուցողական նպատակ, կատարող–դաշնակահարին առաջարկում են դաշնամուրային նվագի տեխնիկական միջոցների բազմազանություն:

Հիմնաբառեր՝ դաշնամուրային ստեղծագործություններ, պարեր, ժողովրդական երգեր և մեղեդիներ:

Zaruhi Ghazaryan *(Armenia)*
Komitas State Conservatory of Yerevan

ON SOME FEATURES OF KOMITAS'S PIANO WORKS

Abstract

This paper analyzes the piano pieces by Komitas which represent a small but very original part of the composer's creative heritage. References are made to Komitas's *Dances*. They direct the pedagogue and performer to the peculiarities of making the instrument unique. Parallels are drawn between Komitas's and Hungarian composer Bela Bartok's piano pieces; in particular, the examples of Komitas's *Cycle of Three Little Polyphonic Pieces* and Bartok's *Mikrokosmos* are focused. Komitas's piano works are assessed emphasizing the national basis strongly expressed in them, as well as their artistic value.

Komitas's piano works have also an educational purpose and in this sense offer the performer and the pianist a variety of technical means of piano performance.

Keywords: piano works, dances, folk songs and melodies.